ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25/2/1

16 սեպտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 31 անդամներ:
Բացակա էին՝ Քնարիկ Հարությունյանը, Վահե Կիրակոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

ՀԼՄ ներկայացուցիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 88-րդ և 89-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերին Զ/1352, Զ/1338, Զ/1355, Զ/1359, Զ/-- թվագրումներով)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի՝ ավագանու հինգ անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2.Հաստատել Հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1)Անանյան Լուսինե - «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խմբակցություն,

2) Արամյան Շավարշ - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

3) Ադամյան Սվետլանա-«Մեր քաղաքը» խմբակցություն,

4) Կիրակոսյան Վահե- «Իմ հզոր համայնք» խմբակցություն,

5) Մուրադյան Աննա -«Մայր Հայաստան» խմբակցություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետով ստեղծված Հանձնաժողովի անդամներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 13-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկույցից հետո հարցեր և ելույթներ հնչեցին , համայնքի ղեկավարն առաջարկեց քվեարկել հարցը հետաձգելու համար, սակայն Կարեն Սիմոնյանը որպես հարցի հեղինակ չհամաձայնեց և հարցը դրվեց քվեարկության:

Ելույթ ունեցան Լեոն Անանյանը, Սարիկ Մինասյանը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-13

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

ԼՍԵՑԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱԴԼԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025-2029 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկույցից հետո ելույթ ունեցավ Լիզա Գասպարյանը եւ անդրադարձավ և իրենց խմբակցության կողմից ներկայացված առաջարկություններին: Նա հայտարարեց, որ խմբակցությունը կողմ է քվեարկելու նախագծին:

Կողմ-18 Դեմ-9 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

ԼՍԵՑԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ ծրագիր), հաշվի առնելով ծրագրի վերաբերյալ հանրային բաց լսումների արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ծրագիրը՝ համաձայն N 1-4 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն,որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026թվականի հունվարի 01-ից:

Կողմ-17 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

ԼՍԵՑԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի3-րդկետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023

թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 283-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետով հաստատված N 5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի,
2) որոշման 2-րդ կետով հաստատված N 25 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:
3) որոշման 3-րդ կետով հաստատված

ա. N 37 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի: բ. N 54 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. « ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության <<Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 500 մանկապարտեզ և նախակրթարան>> ծրագիրը, ինչպես նաև <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից իրականացվող Համաշխարհային բանկի աջակցությամբ ֆինանսավորվող <<Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման >> վարկային ծրագրի (այսուհետ Ծրագիր) շրջանակներում <<Գյումրու թիվ 6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ընդգրկված լինելը, որի արդյունքում ուսումնական հաստատությանը տրամադրվել է դրամաշնորհ՝ նոր նախակրթարանների ստեղծման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի՝ ծրագրին մասնակցության պարտադիր ներդրման պահանջը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի <<ա>> պարբերությամբ, 18-րդ հոդվածի 42 կետով, և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված <<Գյումրու թիվ 6 հիմնական>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն՝ Ա.Ղուկասյանի (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 14-ին N6064 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Կազմակերպությանը (այսուհետ կազմակերպություն) որպես նվիրատվություն հատկացնել 350000(երեք հարյուր հիսուն հազար)Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի կողմից Ծրագրին մասնակցության պարտադիր ներդրում կատարելու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Ա.Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից :
Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ (ՀՐԴԵՀ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽԱՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Վանիկ Խաչատրյանի ընտանիքին պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 6-րդ շարքի թիվ 18 տանը բռնկված հրդեհի պատճառով այրվել է տանիքի փայտյա կառուցատարրերը, տան որոշակի հատված՝ գույքի հետ միասին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «դ» կետերի դրույթներով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, փ/ծ գնդապետ Ա.Ափոյանի 2025 թվականի հուլիսի 04-ին տրված՝ թիվ 1132-95/15 տեղեկանքը և հիմք ընդունելով Վանիկ Խաչատրյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (Գյումրու համայնքապետարանում համապատասխանաբար մուտքագրված 2025 թվականի հուլիսի 07-ին և սեպտեմբերի 08-ին NN 9325,13235 թվագրություններով)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Արտակարգ իրավիճակի (հրդեհ) հետևանքով տուժած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Վանիկ Խաչատրյանին տրամադրել բնաիրային օգնություն, որպես վնասի մասնակի փոխհատուցում 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի արժողության շինարարական նյութ՝ տանիքի վերանորոգման համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծախսը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4269) «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վանիկ Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90-Ա)*

ԼՍԵՑԻՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3(ԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց», «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» և «Մանկապատանեկան արվեստի պալատ»համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին(Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 թվականի սեպտեմբերի03-ինN 13039, N 12982, N 10982 և 04-ին N 13069թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանիինորոշում է.**

1.«Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց»համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը,որպես նվիրատվություն հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից700 000 /յոթ հարյուր հազար/ ՀՀդրամըպարապմունքները հավուր պատշաճի իրականացնելու համար օդամղիչ մանրագնդակներ ձեռք բերելու նպատակով և 300000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամջեռուցման նպատակով վառելափայտի ձեռքբերման համար:

2. «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Նիկողայոս Տիգրանյանին պատկանող դաշնամուրի անվտանգ տեղափոխման և վերականգման նպատակով:

3. «Մանկապատանեկան արվեստի պալատ»համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Անի» պարային համույթի միջազգային ստուգատեսինմասնակցելու նպատակով :

4.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման(4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման, 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի ՀանրապետությանՇիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/2/2գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման և 3-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի ՀանրապետությանՇիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի

ԼՍԵՑԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՇԱԿ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06–ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արշակ Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի գրությունը՝ ողղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 02-ին N 12871 թվագրությամբ), և համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լ. Թովմասյանի զեկուցագիրը՝ ողղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին Զ/1372-2025 թվագրությամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 760 000 /յոթ հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպությանը կից գործող «Մանսուրյան աշակերտական կամերային նվագախմբի» համար թվով 4 նոր թավջութակների ձեռքբերման նպատակով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին սույն որոշման 1-ին կետում նշված ֆինանսական միջոցների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12. «ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Համո Սահյան պոեզիայի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Նաիրի Սահյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված

8/2/3գործառական դասակարգման(4819)«Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնումհամայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91-Ա)*

ԼՍԵՑԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2(ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով«Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» և«Տ.Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններիտնօրեններիգրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 թվականի օգոստոսի04-ինN 13068 և սեպտեմբերի 05-ինN 13196թվագրումներով)՝.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանինորոշում է**.
1.«Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես նվիրատվություն հատկացնել6 600 /վեց հազար վեց հարյուր/ եվրոյին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամ՝ հիմք ընդունելով փոխանցման պահին Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը՝վազող թիրախ մարզաձևերի, Եվրոպայի առաջնությանը մանակցելու համար՝ Streyr Chellenger RT -4,5mm տիպի 2/երկու/ հրացանի ձեռքբերմաննպատակով:
2.«Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 450 000(չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ջեռուցման համար վառարանների, շախմատի խաղաքարերի և ժամացույցերի ձեռքբերման նպատակով:
3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի ՀանրապետությանՇիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման(4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է որոշման 1-ին և 2-րդ կետերում նշվածհամայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ա)*

2025 թվականի հունիսի 17-ին N8172 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. «Համո Սահյան պոեզիայի կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 700 000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Համո Սահյանի երեկոն մեծ շուքով Գյումրի քաղաքում կազմակերպելու և անցկացնելու համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրի Սահյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

13. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

«Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպությունը Գյումրի համայնքում իրականացնում է «Հայաստանի գույները» խորագրով ջրաներկի միջազգային երրորդ փառատոնը: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերություններով, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Սաֆարյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին N13032 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.«Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում իրականացվող «Հայաստանի գույները» խորագրով ջրաներկի միջազգային երրորդ փառատոնի կազմակերպման և անցկացման նպատակով:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Սաֆարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ » ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասյանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի զեկուցագիրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարությանը նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 6 000 000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերջին երեք նախագծերի վերաբերյալ ավագանու անդամների կողմից հնչեցին ելույթներ, առաջարկներ և իրարամերժ կարծիքներ: Քննարկման արդյունքում օրակարգի 12-14-րդ հարցերը մինչև քվեարկությունը հեղինակի կողմից հանվեցին օրակարգից:

ԼՍԵՑԻՆ

15. ԱՐԱ ՎԱՐԴԳԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ՄԿՐՏՉՅԱՆ)

Վարոս Արայի Խաչատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ իր մահացած հոր՝ Արա Վարդգեսի Խաչատրյանի անվամբ հաշվառված «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆԶ Ցե 280» (MERCEDES-BENZ C 280) մակնիշի, 01 VA 045 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2024 թվականի հուլիս ամսից մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը, որը հաշվառված է Արա Վարդգեսի Խաչատրյանի անվամբ, 2024 թվականի հունիսի 06-ին վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Արսեն Ադամյանի կողմից տրված 26 մայիսի 2025 թվականի N 944-95/15 տեղեկանքը, Շիրակի մարզի դատախազի 2025 թվականի մարտի 13-ի գրությունը և

2025 թվականի հունվարի 29-ի թիվ 30108024 քրեական վարույթը կարճելու մասին որոշումը, թվով երեք լուսանկարներ), իսկ Արա Վարդգեսի Խաչատրյանը վթարի հետևանքով մահացել է: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Վարոս Արայի Խաչատրյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Անի թաղամաս 11-րդ փողոց 7ա շենք, բնակարան 2 հասցեում, անձնագիր՝ N AT0534609, տրված՝ 2020 թվականի օգոստոսի 04-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 1701000334) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի մայիսի 30-ին N 7036 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել արտոնություն Արա Վարդգեսի Խաչատրյանի անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցի գույքահարկի 2025թվականի սեպտեմբերի 16-ի դրությամբ 2024 թվականի հուլիս ամսից մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 72.000 (յոթանասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2024 թվականի հուլիս ամսից մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 66.314 (վաթսունվեց հազար երեք հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 5.686 (հինգ հազար վեց հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարոս Արայի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

16. ԱՇՈՏ ԱՐՄԵՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԳՈՀԱՐ ՄԿՐՏՉՅԱՆ)

Աշոտ Արմենի Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ ԷՍ 500» (MERCEDES-BENZ S 500) մակնիշի, 55 OQ 455 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2017 թվականի հունիս ամսից մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Աշոտ Արմենի Եղիազարյանին, 2017 թվականի մայիսի 08-ին վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով (հիմք՝ տեղեկանքը՝ տրված 2025 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ

Մարտիրոսյանի կողմից, տրանսպորտային միջոցի նկարները վթարի վայրից), պետական հաշվառումից ժամանակավորապես հանվել է 2023 թվականի հուլիսի 07-ից և մինչ օրս համարվում է ժամանակավոր հաշվառումից հանված (հիմք՝ տրանսպորտային միջոցը պետական հաշվառումից ժամանակավոր հանված լինելու մասին N 94383535 տեղեկանքը, տրված 2023 թվականի հուլիսի 07-ին) և ենթակա է հաշվառումից հանման խոտանման միջոցով: 2014 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2017 թվականի մայիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար փոխադրամիջոցի գույքահարկի գումարը կազմել է 50.900 (հիսուն հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որը Աշոտ Արմենի Եղիազարյանը պարտավորվել է վճարել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Աշոտ Արմենի Եղիզարյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Երևանյան խճուղի 49 շենք բնակարան 37 հասցեում, անձնագիր՝ AV0541628, տրված՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ին, ոստիկանության 065-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 2009950429) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հուլիսի 22-ին N10242 թվագրմամբ)՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

